ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-5

ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-19/5 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Արևելյան մաքսատուն-վարչության Բագրատաշենի մաքսային կետ-բաժնի համար հսկիչ տաղավարների կառուցման և տեղադրման աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 29.08.2019թ. N 529/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 18.09.2019թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ն.Մնոյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Գրիգորյանը, Կ.Բայբուրտյանը, Տ.Մալխասյանը, Դ.Հարությունյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ
Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

-ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-19/5 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով «ԳԵՊՈՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշով պահանջվող փաստաթղթերը և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը /կցվում է/՝ գնահատող հանձնաժողովի նախագահ Ն.Մնոյանը ներկայացրեց հանձնաժողովի անդամների կողմից իրականացված հայտի գնահատման արդյունքները /գնահատման թերթիկները կցվում է/, որի հիման վրա հանձնաժողովը որոշեց՝
-Հաշվի առնելով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկատվությունը և «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշով պահանջվող փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին՝
- առաջին տեղը զբաղեցրած «ԳԵՊՈՏԱՆԻՔ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:
-Քանի որ, գնման ընթացակարգին միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել և անգործության ժամկետը կիրառելի չէ՝ ուստի ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «ԳԵՊՈՏԱՆԻՔ» ՍՊԸ-ին՝ պայմանագիր կնքելու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ն.Մնոյան

Անդամներ՝ Ա.Գրիգորյան

Կ.Բայբուրտյան

Տ.Մալխասյան

Դ.Հարությունյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան